# ՅԱՒԵԼՈՒԱԾ

18երդ Թապաղային :

## ԳԵՐՄԱՆԻԱ.

### Վիեննա. 28 Սեպտեմբերի :

Սեպտեմբերի 27ին երբոր իմացվեցաւ Վիեննային մէջ թէ Մոսկովի կայսրուհին մօտ է Վիեննա մտնալու, մէկէն Նէմցեփ կայսրուհին Վիեննայէն ճամբայ ելաւ առաւօտը կանուխ իառաջ երթալու համար, կայսրուհիէն ետև ճամբայ ելան իառաջ երթալու նաև Նէմցէին կայսրը, ու Աղէքսանդր կայսրը : Ասոնք ամմէնքը մէկէն հանդիպեցան մէկզմէկու Մարիա-Պրունն ըսված ժամուն մօտիկները և մէկզմէկ բարևելէն ետև նստան չորմնալ մէկէն առապայիմը մէջ, ու չորս կողմերնուն պատած կայսեբական պահապան գունդը Նէմցէին ու մաճառին՝ սկսան երթալ դէպ 'ի Վիեննա . առանց առջևէն ետևէն կերթարկոր ուլանի բալած գունդերը, և էն ետևէն ալ կուգայինկոր խեղմը բազմուի առապաներու՝ որոց մէջնէին երկու թագւորաց երևելի անձինքները . և այսպէս ալայով եկան հասան իրենց տեղը :

Ամսուս 29ին թէ որ հաւան աղէկ ըլլայնէ մեծ հանդէսներ ընեն պիտոր Փիշէնկներու՝ Բրաթէր ըսված տեղը, և ետքը թագրներ՝ կայսրուհիներուն հետը, պըտըտին պիտոր սէյիր ընելու հոր քաղքին մէջ եղած լուսաւորութիւնը : Հոկտեմբերի առջի օրերը ընեն պիտոր փառաւոր հանդէսմը Պալօի 10 հազար հոգիով . անկից ետև կըսկըսի ըլլալ քաղաքական հանդէսները : Շէմպրունին մէջ ըլլայ պիտոր չոլըղի հանդէսմը՝ որուն մէջ 700 վարպետ չոլըղճի երևցընեն պիտոր իրենց մարիֆէթը : Հոկտեմբերի 18ին, Բրինչիբէ Մէթթերնինքհը ( որ Նէմցէին լիակատար իշխանութի ունեցողը ) ընէ պիտոր իրեն ամառվան պալատին մէջը հանդէսմը՝ Լիբսիայի անուանի պատերազմի տարեդարձին համար : Շատ անգամ ըլլայ պիտոր զինուորական ընհանուր կըթութիւններ թէ քաղքին մէջը թէ քաղքէն դուրս :

28ին

Ամսուս 28ին հասան Վիեննայ նաև Պավիէռայի թագաւորը ու թագուհին իրենց երկրորդ զաւակովը՝ որուն անունը է Բրինչիբէ Քառլօ . առանց ալ իառաջ գնաց Նէմցէին կայսրը մինչև Հուլթէլտօրֆ, ու հոն տեղը ըսասա դալէն ետև բարևեցին մէկըզմէկ, ու ամմէնքը մէկէն նստան բաց առապայիմը մէջ, և եկան մտան Վիեննա փառաւոր ալայով, ճամբաներուն մէջ հազված զօրդարված շարված էին պատերազմի կարգով քաղքին պահապան գունդերը ու ուրիշ գունդերը, և մէկ կողմանէալ կըթնտարկոր օթը 'ի պատիւ թագաւորաց նետված թօփերուն ձայներով ու ժողովրդեան կեցցէ կանչելուն ձայներով :

### Մօնախօ, 5 Հոկտեմբերի :

Միւպէքինկ աստեղը՝ որ է Պավիէռայի թագաւորին խորհրդականներէն մէկը, իրեն շինած ջրաբաշխուն գիրքին մէջը առաջարկեց՝ որ իրեք նոր գետեր բացվի Գերմանիային մէջ, և ցըցուց իրեն ճարտարութիւնովը թէ որչափ հարկաւոր է գերմանիային բարեբաղդութեան ու հարստութեանը : Եւ առաջարկութեանը էր այսպէս : Առջի գետը ան ըլլայ՝ որ Տանուպ գետը միացվի Րէնօ գետին հետը՝ Պամպէռկային քովերէն սկսած մինչև Փուրթ հասնի . և մէկ ծիւղնալ հասնի մինչև Նօրիմպէռկ . աս նոր գետով Գերմանիան՝ վաճառականութեան հաղորդակցութիւն կըբանայ Մաճառստանի հետ, Ֆրանսայի հետ, Օլանտայի հետ, Ինկիլթէռայի հետ : Աս գետով Պավիէռան կրնայ ապրանք խըրկել Րէնօ . աս գետով Ինկիլթէռան անմէջապէս հաղորդակցութիւն կունենայ Ասդրիայի, Մաճառստանի, Վալաքիայի ու Թրանսիլվանիայի հետ . աս գետով վաճառականութեան ընելը իրեք մեծ շահ կըբերէ . 1. անկից ետև կըվերջանայ ամմէն օրվան պազիրկեաններուն խարճը՝ որ կընէն 5435 ցամաքով ապրանք տանող ձիու վրէ՝ որոց խարճը է 3,261,000 Ֆիօրին : Երկրորդ մեծ շահը է ան անտառներուն տիրվըտոցը՝ որ են Տանուպ գետին վրայ . հիմայ որովհետև ցամաքով երթայպիտոր փայտը քիչ շահ կըբերեն ան անտառները, բայց աս գետը ըլլալնէ՝ ջուրով անհամար տիրէկներ չիպչիսակ կրնան տանիլ Օլանտային թէրսխանաները : Երրորդը յայտնի է, ղէրէմ ուրտեղ որ ջուր կայ՝ վաճառականութիւնը շատ է, աս պատճառաւ նոր նոր հնարքներ կըգըտնըվի վաճառականութեան ճամբան խօլայլնալուն համար . ասոր յայտնի օրինակը կերևնայ Լինկուտօքքային գետովը . աս գետը տարեկան կելլիր կըբերէ անտեղի իշխանին 850 հազար

ղուշէն

ղուշէն աւելի · բաց ասկից, ան բնակիչներուն՝ որ կընակին աս գետի եզերքին վրայ, վաճառականութեամբ կըվաստըկին 25 միլիօն ղուշէն աւելի · աս գետը շինելուն խարճըվեցաւ 25 միլիօն :

Երկրորդ գետը բացվի՝ Էլպա գետը Վէսէր գետին հետը միացընելու համար · սկսի Չէլլէյէն և անցնելով Ալլէռին վրայով՝ հասնի մինչև Տրօմլինկ, և անկից շիտակ գիծով անցնելով Օհրէն՝ խառնըվի Մակտէպուռկի հետ · ասոր մէկ ճիւղնալ քովընտի կըրնայ երթալ մինչև Պրունսվիք, մէկ ուրիշ ճիւղմընալ Չէլլէն մինչև Անօվէռ · աս ջուրով կրնան հաղորդակցութիւն ունենալ մէկզմէկու հետ Պռէման, Պէռլինը, Պռօմպէռկը, Սթէթթինը, Տանձքան, Վարսավիան, Պըրունսվիքը, Անօվէռը, Ամպուռկը, Տրէզտան :

Երրորդը՝ Լիբօնյէն սկսի բանալ, և հասնի մինչև Սալ, անատենը Լիբօնան կըրնայ ազատ վաճառականութիւն ընել աս ջուրով, Պրէմայի, Անօվէռի, Պրունսվիքի, Պէռլինի, Սթէթթինի ու Տանձքայի հետ :

Աս խելացի մտածմունքը՝ որչափ որ շատ օգուտ ու վաստակ կըբերէ Գերմանիային նէ՝ այնչափ ալ կըկարծըվի որ չուշանար շատ 'ի գործ դնելը :

Համառօտած գիտելիք՝ զանազան տեղուանց գազէթաներէ ժողված :

Սրբազան փափը մէկ կրօնաւորմը խրկեց Ինկիլդէռա՝ որ երթայ ժողվէ մէկտեղ անդին ատեն ցրուած կրօնաւորները՝ որ ապահովութեան համար հոնտեղը փախեր ապաւիներ էին :

Կըսվի թէ Սրբազան փափը պիտոր առաջարկէ Վիէննայի մէջ ըլլալու ժողովքին մէկ կարգադրութիւնմը Գերմանիայի եկեղեցիներուն համար : —— Լօռտ Քասդլէրեակհ Ինկիլիզի տէրութեան լիակատար իշխանութիւն ունեցողը ըսած ըլլայ թէ Վիէննային ժողովքը երբոր սկսինէ՝ վեց շաբաթէն աւելի չիքըշէր : —— Լիվօռնօ ծովեզերեայ քաղաքը երբոր ազատեցաւ Ֆրանսըզներուն ձեռքէն, ու եղաւ ազատ նաւահանգիստնէ, սկսաւ մէկէն վաճառականութիւնը, և ամմէն օր եռեէ եռև կուգան կըլըցվինկոր վաճառականի նաւերը լեցուն ապրանքներով : Մէկ քանի օրվան մէջ եկաւ աս նաւահանգիստը, 100 հատը չուվալ ցորեն · 10 հատը պառիլ եղ, 20 սնտուկ մէրճան, շատ ռախի, պահարեղէն · ասի մէջ դրած զանազան բաներ, շէքէր, խահվէ · աս ապրանքները կըլեցընենկոր առատութեամբ չէ թէ միայն բոլոր Թօսքանան, այլ և ուրիշ Իտալիայի քաղաքներնալ :

—— Ֆիօրէնցայի արհեստից ու գիտութեց ատեանը՝ ժողովքի գումարեցաւ աս տարվան օգոստոսի 27ին · աս ժողովքին մէջը շատ Թիւալիւ գիւտեր առաջարկվեցաւ՝ որոց գլխաւորները են աս հետևեալները · Պարոն Ֆրանչէսքօ Ֆօքաչչինի Ֆիօրէնցայի երևելի մեքենաքանութեան վարպետը առաջարկեց պատկերքի վրայ քաշած ձևը ան նոր տեսակ պօճուռղատին՝ որ գըտնըվեցաւ Ինկիլդէռա ու կըգործածվինկոր հիմայ հոնտեղը · աս պօճուռղատը այնպէս խօլայ ճամբով շինած է՝ որ առանց չուվաններու խալապալըխի՝ սաստիկ կըտըկարացընէ կեդրոնաբեր ուժը ծանր մարմիններուն : Նոյն վարպետը պատկերով ձևացուցած ներկայացուց ատեանին մէկ նոր տեսակ գործիքմը պուռմա ոլորելու ու բանալու՝ որ աս վերջի ատենները գըտնըվեցաւ Ինկիլդէռա ու կըգործածվինկոր անտեղը, աս գործիքով միայն ամմէն տեսակ մանր ու խոշոր պուռմաները կըբանայ կըդոյէ խօլայութեամբ :

Ֆիօրէնցայի քիմիքային վարպետը պատկերի վրայ ձևացուցած ներկայացուց ատեանին մէկ նոր տեսակ քիմիական օճախի շինուածքմը · աս օճախը այնպէս վարպետութեամբ շինված է՝ որ ամենևին ծուխը ետ չիդառնար Թէպէտ և քամին Թէրս ու մէրս փչէ · աս վերջի ատենները շատ կատարելագործեցին աս քիմիական օճախները, բայց աս վերջինը քան զանոնք ալ կատարեալ է, զէրէմ այնպէս վարպետ ձևով շինած է կրակը վառվելուն տեղը՝ որ տաքութիւնը չի ցըրվիր ու աւելի ուժով կըներգործէ, և միանգամայն քիչ նիւթ կըխարճէ վառելու : —— Ինկիլդէռայի պատերազմական ատեանին ցանկին կէօրէ զայ եղերէ Ինկիլիզի զինուորական դունդէն 1811ին, 14,353 մեռնելով ու 7085 ալ զինուորութէ փախչելով, 1812ին մեռեր է 17,481 զինուոր, ու 7371 ալ փախերեն զինուորութէ : 1013յին մեռեր է 18,885, ու 7,849 ալ փախեր է զինուորութէ :

—— Ինկիլիզի Թիւօրին տըղուն աղջիկը՝ որ կըսվէր Բրինչիբէսսա տը Կալլէս կուզէին պսակել հիմակվան Օլանտայի նոր Թագաւորին հետը, բայց աղջիկը աս պսակին չիհաւանելուն համար՝ շատ նիզաներ եղաւ Ինկիլդէռայի մէջ · աս աղջիկը Ինկիլդէռայէն ելաւ ու հիմայ Զվիցցէռիին ու Իտալիային կողմերը կըպըտըտինկոր : —— Հոկտեմբեր ամսոյն մէջը երբոր եկաւ սրբոյն Ֆրանչիսկոսի տօնին օրը (որ է Նէմցէի կայսեր անուան օրը), ան ամմէն քաղաքները որ հիմայ Նէմցէի տէրութեան տակնեն՝ փառաւոր հանդէսներ ըրին, 'ի պատիւ կայսեր :